



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՆՑ ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇԻՆՔ

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11 հոկտեմբերի, 2007թ.

Հոկտեմբերի 12-ին լրանում է Հայաստանի կողմից ԱՀԿ-ի «Ծխախոտի դեմ պայքարի մասին» Շրջանակային կոնվենցիայի վավերացման երրորդ տարեդարձը: Այդ օրվանից զգալի փոփոխություններ են տեղի ունեցել համապատասխան օրենսդրական դաշտում, մասնավորապես ընդունվել և ուժի մեջ է մտել «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման» ՀՀ օրենքը, ինչպես նաև պետրյուջեից միջոցներ են հատկացվել հակածխախոտային քարոզարշավների կազմակերպման նպատակով:

«Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի քսանից ավելի անդամ կազմակերպությունները, ողջունելով վերը նշված ձեռքբերումները և այնուամենայնիվ մտահոգված լինելով պետական մարմինների կողմից հակածխախոտային օրենսդրության նկատմամբ թույլ վերահսկողությամբ, նամակ է ուղղել ՀՀ Վարչապետին՝ Շրջանակային կոնվենցիայի վավերացման երրորդ տարեդարձի առիթով: Նամակում, մասնավորապես, ասվում է.

«Հարգելի պարոն վարչապետ,

Մինչ Դուք վերջացնեք այս նամակի ընթերցումը, Հայաստանում առնվազն մեկ տղամարդ վաղաժամ կմահանա ծխախոտի օգտագործմամբ պայմանավորված հիվանդությունից, անչափահասը անարգելք կգնի իր առաջին սիգարետը, և տասնյակ չծխողներ կենթարկվեն ծխողների ծխի քաղցկեղածին աղդեցությանը:

Մենք՝ «Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը, որը քսանից ավելի հասարակական կազմակերպությունների միություն է, միավորվել ենք ծխախոտի դեմ պայքարի շուրջ: Մենք հավատում ենք, որ ներկա ու ապագա սերնդի առողջությունը մեր պետական անվտանգության ու տնտեսական զարգացման ամենակարևոր գրավականներից է: Յուրաքանչյուր նախաձեռնություն, որն ուղղված է մեր առօրյա կյանքից ծխելու չարիքի հեռացմանը, կնպաստի առողջ սերնդի ձևավորմանը: Ամբողջ աշխարհում լայն թափ առած հակածխախոտային շարժումը միտված է ծխելուց առաջացող հիվանդությունների կանխարգելմանը, որը շատ ավելի դյուրին է քան դրանց բուժումը: Այսօր կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելով կարող ենք հսկայական ֆինանսական միջոցներ խնայել ապագայում: Մակայն ամենակարևորը կունենանք առողջ սերունդ, որը լիարժեք և արժանավայել կյանքով կապրի Հայաստանում՝ առանց ծխախոտի:

Դեռևս 2005թ.-ին դաշինքը հանդես եկավ հետևյալ նախաձեռնությամբ՝ սահմանել հոկտեմբերի 12-ը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ծխախոտի դեմ պայքարի մասին» շրջանակային կոնվենցիայի ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացման օրը, որպես ծխախոտի դեմ պայքարի ազգային օր: Այսօր, ինչպես և երկու տարի առաջ, մեր նախաձեռնությունը բխում է այն իրողությունից, որ առկա լրատվական առիթները չեն բավարարում հանրության տեղեկատվական պահանջը հակածխախոտային պետական քաղաքականության վերաբերյալ: Մեր խորին համոզմամբ, ծխախոտի դեմ պայքարի ազգային օրվա սահմանումը նոր լիցք կհաղորդի ծխախոտամոլության համաճարակի կասեցմանն ուղղված ծրագրերին Հայաստանում:

Թույլ տվեք նաև Ձեր ուշադրությունը հրավիրել պետական մարմինների կողմից հակածխախոտային ոլորտի թույլ վերահսկողությանը: Մասնավորապես, «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի նկատմամբ



CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION
ԵՐԵՎԱՆԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՂՈՒՄԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ





վերահսկողություն իրականացնող լիազորված մարմինը մինչ օրս չի հաստատվել, այնինչ, համաձայն ՀՀ վարչապետի 343-Ս որոշման, այն պետք է հաստատված լիներ 2006թ.-ի հունվարին: Վերահսկող մարմնի /մարմինների/ և մեխանիզմների բացակայությունը չի նպաստում Հայաստանում օրենքի գերիշխանության հաստատմանը և մասնավորապես հասարակական վայրերում ու աշխատատեղերում շարունակվում է ոտնահարվել ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու ծխախոտի ծխից զերծ առողջ միջավայրում ապրելու և աշխատելու իրավունքը:

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքը, գիտակցելով ծխախոտային արտադրատեսակների նկատմամբ արդյունավետ գնային և հարկային քաղաքականության և ծխախոտի հարկերի բարձրացման անհրաժեշտությունը, հաշվի առնելով, որ այն ոչ միայն կապահովի պետական բյուջեի եկամուտների էական ավելացում, այլև ուղղված կլինի ծխախոտի օգտագործման նվազեցմանը հատկապես երիտասարդության շրջանում, իր պատրաստակամությունն է հայտնում սատարելու այդ քաղաքականությանը:

Բարձր գնահատելով Ձեր առաջնորդությունը մեր հայրենիքի զարգացման գործում, այդ թվում նաև հակածխախոտային քաղաքականության միջոցով հանրային առողջության պահպանման գործում՝ խնդրում ենք Ձեզ հատուկ հսկողություն հաստատել պետական հակածխախոտային օրենսդրության կիրարկման վերաբերյալ, ինչպես նաև սահմանել հոկտեմբերի 12-ը որպես ծխախոտի դեմ պայքարի ազգային օր:

Մույն նամակին ենք կցում 2005թ. հոկտեմբերի 11-ի և 2006թ. սեպտեմբերի 22-ի նամակների պատճենները:

Խորին հարգանքով,

«Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական դաշինքի անդամ կազմակերպություններ՝ «Առողջապահական կրթության ասոցիացիա» ՀԿ, «Առողջություն և բարեկեցություն» ՀԿ (Մեղրի). «Բաց բժշկական ակումբ» ՀԿ, «Բնապահպանական ուսումնասիրությունների կենտրոն», «Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ, «Զարգացման հիմունքներ» ՀԿ, «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ, «Հաղարծին» երիտասարդական ՀԿ, «Կանանց առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ, «Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ», «Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա», «Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ, «Հայ կանանց միջազգային միություն» հայաստանյան բաժանմունք, «Նամայնքային զարգացման և սոցիալական աջակցության կենտրոն» ՀԿ (Գյումրի), «Հանրային առողջության հայկական միավորում» ՀԿ, «Հասարակական առողջապահության հայկական ասոցիացիա» ՀԿ, «Լեռնեցիների առողջ սերունդ» ՀԿ (Գորիս), «Մարդիկ հանուն առողջ ապրելակերպի» ՀԿ; «Մարդու առողջություն հիմնադրամ», «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ, «Միավորված կանանց խորհուրդ «Վերելք» ՀԿ, «Մեղվիկ» ՀԿ (Գյումրի), «Վստահության դռներ» ՀԿ (Հրազդան)

Նարինե Մովսիսյան

«Հայաստանն առանց ծխախոտի» դաշինքի կոորդինատոր
Հայաստանի ամերիկյան համալսարանի առողջապահական
ծառայությունների հետազոտման ու զարգացման կենտրոն
Հեռ.՝ +(374 10) 51 26 17; 51 25 92 Ֆաքս՝ +(374 10) 51 25 66
Էլ. փոստ՝ nmovsesi@aua.am »



CHILDREN'S HEALTH CARE ASSOCIATION
ԵՐԵՎԱՆԻ ՄԻՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՃՊՈՒՄԱՆ ԱՄՈՒՆՁՆԻ

